ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«25» հունվարի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-02/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մավշին» ՍՊԸ-ի 15.01.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Մավշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 15.01.2016թ. ներկայացրած բողոքով «Մավշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15»

ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նիստը որոշել է, որ «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշները չեն բավարարում հրավերի պահանջներին:

Ընկերությունը հայտնել է, որ ըստ Ընթացակարգի հրավերի պահանջների՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը կազմակերպությունը ներկայացնում է նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը), ընդ որում դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ N 3.1 հավելվածով ներկայացնում է այդ պայմանագրի (կամ պայմանագրերի) անվանումները և նրանց ընդհանուր կազմված գումարները:

«Մավշին» ՍՊԸ-ն հայտնել է, որ ներկայացրել է երկու պայմանագիր, որոնք բավարարել են Ընթացակարգի հրավերի պահանջներին, սակայն N 3.1 հավելվածում դրանց հանրագումարը հաշվարկելիս՝ տեղի է ունեցել վրիպակ, հետևաբար, ըստ գնումների մասին ՀՀ օրենսդրության, հանձնաժողովը պետք է հիմք ընդուներ պայմանագրի կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) մեջ նշված գումարը:

Ընկերությունը նշել է, որ ըստ Ընթացակարգի հրավերի պահանջների՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը բավարարելու համար «Մավշին» ՍՊԸ-ն պետք է ներկայացներ տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթեր:

«Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է ավտոկռունկի վարձակալության պայմանագիր, որում նշված է եղել պայմանագրի գործողության ժամկետի ավարտ 30.12.2014թ., սակայն

«Մավշին» ՍՊԸ-ն ունեցել է լրացուցիչ համաձայնագիր, որում այդ պայմանագրի ժամկետը երկարաձգվում է մինչև 30.12.2016թ.:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է պահանջեր, որպեսզի «Մավշին» ՍՊԸ-ն հավելյալ ներկայացներ այդ լրացուցիչ համաձայնագիրը:

«Մավշին» ՍՊԸ-ն գտել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ և 46-րդ կետերը, քանի որ Ընկերությանը չի տրամադրվել մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է վերանայել «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը և հաղթող ճանաչել «Մավշին» ՍՊԸ-ին:

Կենտրոնում 21.01.2016թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ժամանակ «Մավշին» ՍՊԸ-ի տնօրենն ամբողջությամբ պնդել է ներկայացրած բողոքը՝ հայտնելով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգը, քանի որ չի կասեցրել նիստը մեկ աշխատանքային օրով, ինչի արդյունքում Ընկերությունը հնարավորություն չի ունեցել շտկելու առկա անհամապատասխանությունը:

2. <u>Վայքի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Վայքի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 21.01.2016թ. թիվ 3 գրությամբ «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.12.2015թ. կազմակերպվել է «ՎՔ-ԲԸԱՀ-

ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 30.12.2015թ. ժամը 10:30-ին, որի ընթացքում բացվել և գնահատվել են թվով չորս մասնակիցների կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտերը:

Հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է.

1.հայտեր ներկայացրած բոլոր չորս մասնակիցների ներկայացրած ծրարները ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան,

2. բոլոր չորս մասնակիցների ներկայացրած ծրարներում առկա չեն եղել հրավերով պահանջված փաստաթղթերը և փաստաթղթերը կազմված չեն եղել հրավերի պահանջներին համապատասխան:

Մասնավորապես, «Մավշին» ՍՊԸ-ն (կոնսորցիումով մասնակցել է «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն) իր ներկայացրած հայտում «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գծով ներկայացրել է հայտարարություն հայտը ներկայացնելու և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված շինարարական աշխատանքներ՝ 92557412 ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Համաձայն Ընթացակարգի հրավերի պահանջների՝ մասնակիցը պետք է հայտով ներկայացնի իր կատարած աշխատանքների պայմանագրերի պատճենները և դրանց պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը: «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է նախկինում կատարված երկու պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 76962673 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում Հավելված N 3.1-ով ներկայացրած հայտարարությանը:

«Տեխնիկական միջոցներ» չափանիշի գծով «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է Զիլ ԿՍ-2571 Ա Ավտոկռունկի վարձակալության պայմանագիր, որի գործողության ժամկետը սահմանված է մինչև 30.12.2014թ.: Պայմանագրին կից պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգող որևէ համաձայնագիր չի ներկայացվել: «Մավշին» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքում կցված լրացուցիչ համաձայնագիրը նշված պայմանագրի անբաժանելի մասն է և պետք է ներկայացվեր պայմանագրի հետ միասին:

Համաձայն Կարգի 74-րդ կետի «զ» պարբերության՝ հայտերի բացումը, գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է հայտերի բացման նիստում, հաշվի

առնելով այն հանգամանքը, որ այն հայտերը, որոնք գնահատվել են հրավերի պահանջներին անբավարար, մերժվում են, իսկ հրավերի պահանջները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած՝ նիստի ներկա մասնակիցների ներկայացուցիչների հետ կազմակերպվում են ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ և բանակցությունների ավարտին նվազագույն գին ներկայացրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, որի հետ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով կնքվում է պայմանագիր: Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում, պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգը կազմակերպելիս՝ հաշվի են առնվել Կարգի 45-րդ և 46-րդ կետերը՝ հաշվի առնելով նույն որոշման 10-րդ գլխի առանձնահատկությունները (մեկ աշխատանքային օր չի տրամադրվում թերությունները շտկելու համար):

Վայքի քաղաքապետարանը հայտնել է նաև, որ «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է համատեղ գործունեության պայմանագիր, որտեղ հստակ նշված չեն գործընկերների կողմից կատարվող ներդրումները, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագրերը) չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Քննարկման արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատումն իրականացվել է նույն նիստի ընթացքում և արդյունքում որոշվել է չկայացած հայտարարել Վայքի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջների:

Կենտրոնում 21.01.2016թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի վերաբերյալ Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. <u>ԳԲԽ-02/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-02/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

2. Ընթացակարգի 1-ին (Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման աշխատանքներ) և 2-րդ (Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքներ) չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Մավշին» ՍՊԸ-ն և «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրությամբ արձանագրվել է՝

- «Մավշին» ՍՊԸ-«Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշները չեն բավարարում հրավերի պահանջներին:
- հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան,
- բացված ծրարներում առկա չեն հրավերով պահանջված փաստաթղթերը կամ փաստաթղթերը կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան,
- հանձնաժողովը որոշել է հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:
- հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշել է Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ չկայացած հայտարարել Վայքի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը:

4. <u>ԳԲԽ-02/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Մավշին» ՍՊԸ-ի 15.01.2016թ. ներկայացրած բողոքը, Վայքի քաղաքապետարանի 21.01.2016թ. թիվ 3 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնին ուղղված 05.10.2015թ. թիվ 1/73-1/28943-15 գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե գնումն իրականացվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերությունների հիման վրա, ապա՝

• «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, համատեղ գործունեության պայմանագիր, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են կոնսորցիումով, գնային առաջարկ, ***որակավորումը հիմնավորող փաստաթղթեր,*** ապրանքների գնման դեպքում ապրանքի անվանում և տեխնիկական բնութագրեր, հայտի ապահովում:

• «զ» պարբերության համաձայն՝ ***հայտերի բացումը, գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է <u>հայտերի բացման նիստում,</u> հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն հայտերը, որոնք գնահատվել են հրավերի պահանջներին անբավարար, մերժվում են,*** իսկ հրավերի պահանջները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած՝ նիստի ներկա մասնակիցների ներկայացուցիչների հետ կազմակերպվում են ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ և բանակցությունների ավարտին նվազագույն գին ներկայացրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, որի հետ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով կնքվում է պայմանագիր: Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու

դեպքում, պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Կենտրոնին ուղղված 05.10.2015թ. թիվ 1/73-1/28943-15 գրությամբ ներկայացված պարզաբանման համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարի 14.04.2015թ. թիվ 222-Ա հրամանով լրացում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանում և հաստատվել են Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ», «դ» պարբերությունների հիման վրա՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով իրականացվող գնման գործընթացների հրավերների օրինակելի ձևերը: Օրինակելի ձևերի համաձայն՝ հայտերի բացումից հետո մասնակցին չի կարող ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթուղթ ներկայացնելու առաջարկ: Ավելին, օրինակելի ձևերով սահմանված է, որ հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մասնակիցը ներկայացնում է հայտով՝ ի սկզբանե:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ գրության՝ եթե գնումն իրականացվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերությունների հիման վրա, ապա Կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության, ինչպես նաև վկայակոչված հրավերների օրինակելի ձևերի համաձայն՝ ***մասնակցին չի կարող ներկայացվել անհամապատասխանությունը շտկելու առաջարկ:***

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընկերության բողոքով ներկայացրած՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրությամբ կայացված որոշումը վերանայելու պահանջը ենթակա է մերժման, քանի որ, եթե Պատվիրատուն գնման ընթացակարգն իրականացնում է Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ», «դ» պարբերությունների համաձայն, ապա հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում մասնակցին չի կարող ներկայացվել անհամապատասխանությունը շտկելու առաջարկ, ուստի Պատվիրատուի կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Ինչ վերաբերում է «Մավշին» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած՝ Ընկերությանը հաղթող ճանաչելու պահանջին, ապա հայտնում ենք, որ Ընկերության այս պահանջը

նույնպես ենթակա է մերժման, քանի որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման որոշում կայացնելու լիազորություն չունի:

Այսպիսով, գտնում ենք, որ Կարգի 45-րդ և 46-րդ կետերի խախտման հիմքով «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրությամբ կայացված որոշումը վերանայելու և «Մավշին» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու պահանջների վերաբերյալ Ընկերության կողմից Կենտրոնին 15.01.2016թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-02/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան